ՊԱՏՇԱՃ ԵՎ ԼԻԱՐԺԵՔ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԵՋ

Տասներորդ հաղորդում

Եզրասի և Նեեմիայի գրքերի՝ վերականգնման գրքերի կենտրոնական ու հանգուցային դրույթը՝ պատշաճ ու լիարժեք ղեկավարումը Տիրոջ վերականգնման մեջ

Գրվածքների ընթերցում. Նեմ 8:1-10, 13:14, 29-31, Մտթ 20:25-28, 23:8-13, Եբր 13:7

I. Աստծու հավիտենական տնտեսության և Տիրոջ վերականգնման մեջ ղեկավարումը կախված է հոգևոր ընդունակությունից. ղեկավարումը պաշտոնական, մշտական, կազմակերպչական կամ աստիճանակարգային չէ՝ Ա Թսղ 1:5, 2:1-14, 5:12-13, Եբր 13:7, 17, 24.

Ա. Ղեկավարման մասին Տիրոջ պատկերացումը հակառակ է բնական պատկերացմանը. Աստծու մարդկանց միջավայրում փաստացի չկա ղեկավարում բնական իմաստով՝ Մտթ 20:25-28, 23:8-13.

1. Աստծու նորկտակարանյան տնտեսության մեջ ղեկավարումը ստրկություն է նշանակում. ցանկացած ոք, ով ուզում է ղեկավարող լինել, պետք է պատրաստ լինի ստրուկ լինելու՝ Մրկ 10:35-45:
2. Ղեկավարումը ձևավորվում է կյանքում աճի շնորհիվ և կարիքի հետևանք է. եթե չկա կարիք, ղեկավարում չի կարող դրսևորվել՝ Ա Պտ 5:1-3:
3. Ղեկավարման մասին մարդկային պատկերացումը հեռացնելու նպատակով Աստված սահմանել է, որ Իր ժողովրդի միջավայրում ղեկավարումը պետք է միշտ կախված լինի հոգևոր ընդունակությունից՝ Գրծ 13:2, 9, 14:12, Գղտ 2:11-14:
4. Տիրոջ վերականգնման մեջ կազմակերպված ղեկավարում չկա և միավորող կազմակերպություն չկա. կա մեկ Գլուխ, ով անմիջականորեն հրահանգներ է տալիս բոլոր անդամներին, և կա մեկ օրգանիզմ՝ Մարմինը՝ Եփս 1:22-23:

Բ. Նոր Կտակարանի համաձայն՝ առաքյալների իշխանությունը հոգևոր է և ամփոփված է խոսքի նրանց սպասավորության մեջ՝ Գրծ 2:42, Բ Կրթ 13:5-6, Ա Թսղ 2:13.

1. Նրանք չունեն եկեղեցու գործերին միջամտելու՝ դիրքի վրա հիմնված իշխանություն. միայն նրանց սպասավորած խոսքն իշխանություն ունի՝ Կղս 4:16, Եբր 13:7:
2. Եկեղեցիները հետևում են առաքյալներին, որովհետև առաքյալներն ունեն նորկտակարանյան ուսմունքը՝ Փլպ 2:12, Գրծ 20:17-36:
3. Եթե այս կամ այն եկեղեցին շեղվում կամ մոլորվում է, առաքյալները պարտականություն ու պատասխանատվություն են դրսևորում՝ կարգավորելու իրավիճակը Աստծու խոսքի համաձայն, որն իշխանություն ունի՝ խխ. 26-27, Բ Կրթ 10:6, Բ Տմթ 1:13, 4:2:
4. Ղեկավարումը առաջանում, ամրապնդվում և սահմանափակվում է առաքյալների ուսմունքի շրջանակներում՝ Տտս 1:9:

Գ. Նոր Կտակարանում կա մեկ սպասավորություն մեկ ղեկավարմամբ՝ Գրծ 1:17, 25, Բ Կրթ 4:1.

1. Այսօրվա քրիստոնեությունը բաժանված է, քանի որ դրանում բազմաթիվ ղեկավարումներ կան. քանի որ սպասավորությունը մեկ է, չպետք է ավելի քան մեկ ղեկավարում լինի:
2. Կա մեկ ղեկավարում, քանի որ Աստված, Տերն ու Հոգին մեկ են. մեկ ղեկավարումը հանուն Քրիստոսի Մարմնի Հոգու միասնությունը պահելու համար է՝ Եփս 4:3-6:
3. Նոր Կտակարանը ցույց է տալիս Աստծու պատվիրակային իշխանությունը նրանց մեջ, ովքեր առաջնորդում են սպասավորության գործում, իշխանություն, որը կառուցման համար է՝ Բ Կրթ 13:10.
   ա. Աստծու պատվիրակային իշխանությունը առաջնորդող եղբայրների ուսմունքի մեջ էր՝ Ա Կրթ 4:17բ-21, 7:17բ, 11:2, 16:1, Բ Թսղ 3:6, 9, 12, 14:
   բ. Միևնույն բանը ամենուրեք ամեն եկեղեցում ուսուցանելը Պողոսի պատվիրակային իշխանության ցուցաբերումն էր՝ Ա Կրթ 4:17բ:

Դ. Նորկտակարանյան սպասավորությունում ղեկավարումն ավելի շատ նորկտակարանյան ուսմունքի մեջ է, քան ինքնին նորկտակարանյան սպասավորության առաջնորդողների մեջ՝ Գրծ 2:42, Բ Տմթ 3:10:

II. Նորկտակարանյան սպասավորության մեջ ղեկավարումը Աստծու հավիտենական տնտեսության վերահսկող տեսության ղեկավարումն է և ոչ թե որևէ վերահսկող անձի ղեկավարումը. Պողոսն ազդարարեց. «Ես այդ երկնային տեսիլին անհնազանդ չեղա»՝ Գրծ 26:19.

Ա. Աստծու հավիտենական տնտեսությունը բացահայտվել է առաքյալների միջոցով, բայց քանի որ հավատացյալները կորցրել են դրա պատշաճ հասկացողությունը, անհրաժեշտ է, որ Տերը վերականգնի այն. Աստծու հավիտենական տնտեսությունը (հունարեն՝ «օյկոնոմիա») Նրա տնային տնտեսության ղեկավարումն է, այն է՝ Իրեն Քրիստոսի մեջ բաշխել Իր ընտրյալ մարդկանց մեջ, որպեսզի Նա Իրեն արտահայտելու համար տուն ձեռք բերի, որը եկեղեցին է՝ Քրիստոսի Մարմինը՝ Եփս 3:2, 8-9, Ա Տմթ 1:3-4, 3:15, Եփս 1:10, 2:21-22, Ա Պտ 4:10;

Բ. «Վերականգնում»-ը նշանակում է ինչ-որ բանի վերակերտում կամ վերադարձ նորմալ վիճակի այդ բանի վնասվելուց կամ կորչելուց հետո. «վերականգնում»-ը նշանակում է վերադառնալ Աստծու սկզբնական մտադրությանը և Գրվածքներում բացահայտված չափանիշին, որոնք համապատասխանում են Աստծու հավիտենական տնտեսության բովանդակությանն առնչվող Նրա վերականգնման ներկա առաջխաղացմանը.

1. Տիրոջ վերականգնումը Քրիստոսի՝ որպես մեր կենտրոնի, իրականության, կյանքի ու ամեն բանի վերականգնումն է Նրա լիակատար սպասավորության՝ մարմնացման, ներառման և ուժեղացման մեջ՝

Կող 1:17բ, 18բ, Սղմ 80:1, 15, 17-19, Հվի 1:14, Ա Կրթ 15:45բ, Հյտ 2:4-5, 7, 17, 3:7-8, 12-13, 17-22, 4:5, 5:6, Հվի 6:57, 14:21, 23, 21:15-17, հմմտ Երմ 32:39:

2. Տիրոջ վերականգնումը Քրիստոսի Մարմնի միասնության վերականգնումն է՝ Հվի 17:11, 21-23, Եփս 4:3-4ա, Հյտ 1:11:
3. Տիրոջ վերականգնումը Քրիստոսի Մարմնի բոլոր անդամների գործառույթի վերականգնումն է՝ Եփս 4:15-16, Հռմ 15:16, Ա Պտ 2:5, 9, Ա Կրթ 14:1, 4բ, 12, 26, 31, 39, Երմ 31:33-34 (տե՛ս ռ. 33-րդ խոսքի ծթգ 1):

Գ. Այս տեսությունը պետք է օր օրի նորոգվի մեր մեջ, որպեսզի մեր ամբողջ կյանքի, աշխատանքի ու գործունեության վերահսկող տեսությունը դառնա՝ Ա Հվի 1:7, Ա Պտ 2:9, Եսյ 2:5, Սղմ 119:105, 36:8-9:

Դ. Եթե մարդը թողնում է Տիրոջ վերականգնումը, նշանակում է՝ նա այդպես էլ չի տեսել, թե Տիրոջ վերականգնումն ինչ է. եթե չենք տեսել Տիրոջ վերականգնման տեսությունը, ապա, ըստ էության, Տիրոջ վերականգնման մեջ չենք՝ Գրծ 26:13-19, հմմտ Ծնդ 13:14-18:

Ե. Մենք՝ Տիրոջ վերականգնման մեջ եղողներս, պետք է Աստծու հավիտենական տնտեսության պարզ տեսություն ունենանք, ապա կառավարվենք, վերահսկվենք և ուղղորդվենք այդ տեսությամբ, որովհետև մեր նպատակը Աստծու հավիտենական տնտեսությունը Նրա վերականգնման մեջ իրականացնելն է:

Զ. Տիրոջ վերականգնման մեջ ղեկավարումը Աստծու կողմից Աստծու հավիտենական տնտեսության վերաբերյալ տված տեսության ղեկավարումն է, տեսություն, որը սահմանափակում է մեզ, ուղղորդում ու վերահսկում է մեզ, որպեսզի խուսափենք խառնաշփոթից ու բաժանությունից՝ Առկ 29:18ա:

Է. Ընթերցեք հավելվածը «Դարի տեսությունը» գրքից:

III. Եզրասի և Նեեմիայի գրքերի՝ վերականգնման գրքերի կենտրոնական ու հանգուցային դրույթը պատշաճ ու լիարժեք ղեկավարումն է՝ Նեմ 8:1-10.

Ա. Տիրոջ վերականգնման մեջ մենք ունենք մեկ սպասավորության մեջ մեկ վերահսկող տեսության ղեկավարումը նրանց միջոցով, ովքեր բերում են այդ տեսությունը՝ Եփս 3:3-5, 9, Կող 1:24-29.

1. Պողոսն ասաց, որ ինքը և իր համագործակիցները «Քրիստոսի ծառաներ և Աստծու խորհուրդների տնտեսվարներ» են (Ա Կրթ 4:1). նրանք տնտեսվարներ էին, որոնք հավատացյալներին բաշխում էին Աստծու խորհուրդների երկնային տեսությունը, որոնք են Քրիստոսը՝ որպես Աստծու խորհուրդը, և եկեղեցին՝ որպես Քրիստոսի խորհուրդը (Կող 2:2, Եփս 3:4). բաշխման այս ծառայությունը՝ տնտեսվարությունը, առաքյալների սպասավորությունն է (3:2, 8-9):
2. «Տնտեսվարների մեջ փնտրվում է, որ նա հավատարիմ գտնվի» (Ա Կրթ 4:2). ինչպես և Պողոսը, մենք պետք է լինենք մարդիկ, «ում հանդեպ Տիրոջից ողորմածություն է ցուցաբերվել հավատարիմ լինելու» (7:25բ, Ա Տմթ 1:12), որպեսզի հավատարիմ ստրուկներ լինենք, որոնք

սովորության համաձայն Աստծու տնեցիներին հոգևոր կերակուր են տալիս՝ եկեղեցում հավատացյալներին սպասավորելով Աստծու և Քրիստոսի խոսքը՝ որպես կենսամատակարարում (Մտթ 24:45-47). մենք ուզում ենք լինել մարդիկ, ովքեր հավատարիմ են Տիրոջ աշխատանքի վրա այս դարաշրջանում, որպեսզի մասնակցենք Տիրոջ ուրախությանը հաջորդ դարաշրջանում՝ ունենալով այն գիտակցությունը, որ Տիրոջ գովելը և պարգևը կախված են ոչ թե մեր աշխատանքի չափից և ծավալից, այլ Նրա շնորհն ամենալիակատար չափով օգտագործելու հանդեպ մեր հավատարմությունից (25:21-23, հմմտ Հյտ 3:8):

Բ. Միայն Նեեմիայի և Եզրասի պես մարդկանց ղեկավարման ներքո Իսրայելը կարողացավ վերակազմվել և դառնալ երկրի վրա Աստծու վկայությունը՝ Աստծու արտահայտությունը, հեթանոսական ազգերից լիովին տարբերվող ժողովուրդ. սա այն բանի նախատիպն է, թե Աստված ինչպիսին է ուզում այսօրվա եկեղեցին տեսնել՝ Նեմ 13:14, 29-31, Ա Տմթ 3:15:

Գ. Նեեմիան գիտեր, որ առանց Եզրասի՝ ինքը չէր կարող Աստծու ժողովրդին վերակազմել.

1. Ժողովրդին վերակազմելիս Նեեմիան գիտակցում էր, որ ինքը չգիտե Աստծու Խոսքը:
2. Եզրասը հայտնի էր Աստծու Խոսքի իր գիտությամբ, և Նեեմիան պատրաստ էր դիմելու Եզրասի օգնությանը:

Դ. Աստվածային սկզբունքի համաձայն՝ Մարմնի պատշաճ ներկայացուցիչները միշտ նրանք են, ովքեր միացած են ուրիշներին որպես զույգ՝ Ա Կրթ 1:1, Ելց 4:14բ-16.

1. Մենակ լինել նշանակում է անհատապաշտ լինել, բայց մեկ ուրիշի հետ ուղարկվել, նշանակում է Մարմնի սկզբունքի համաձայն ուղարկվել՝ Ղկս 10:1, Գրծ 13:1-3, Հռմ 12:5, Ա Թսղ 1:1:
2. Անհատապաշտորեն վարվել նշանակում է խախտել Մարմնի սկզբունքը:
3. Տիրոջ վերականգնման մեջ Մարմնի ճշմարիտ կառուցման օրհասական անհրաժեշտություն կա. սակայն կառուցման այս աշխատանքը կարող է իրականացվել միայն իրար որպես զույգ միացած համագործակիցների կողմից՝ Փլպ 2:19-22:

Ե. «Տերն ինձ ցույց է տվել, որ պատրաստել է բազմաթիվ եղբայրների, որոնք որպես ստրկակիցներ ծառայելու են ինձ հետ միախառնման ճանապարհով: Կարծում եմ, որ դա Տիրոջ գերիշխան ապահովումն է Իր Մարմնի համար և Նրա սպասավորությունն իրականացնելու արդի ճանապարհը»՝ Վիթնես Լի, մարտի 24, 1997թ. (*Վիթնես Լի, Երկերի ժողովածու, 1994–1997թթ., հտ 5, «Հաղորդակցության նամակ՝ երախտագիտությամբ»):

Հավելված «Դարի տեսությունը» գրքից.

ԱՆՆԱՀԱՆՋ ՀԵՏԵՎԵԼ ԱՅՍ ԴԱՐԻ ԱՎԱՐՏՈՒՆ ՏԵՍՈՒԹՅԱՆԸ

Որպեսզի այսօր ծառայենք Աստծուն, մեր տեսությունը պետք է ձգվի Ծննդոցում Ադամի առաջին տեսությունից մինչև եկեղեցու՝ Նոր Երուսաղեմի երևան գալու վերջնական տեսությունը: Սա և միայն սա է ավարտուն տեսությունը: Միայն այսօր է այս տեսությունը մեզ համար բացվել:

Թայբեյի Ազգային պալատական թանգարանում երկար մագաղաթի վրա նկարված մի նկար կա, որը կոչվում է «Տեսարանը գետի մոտ Ցինմին տոնախմբության ժամանակ»: Այն մանրամասն նկարագրում է չինացիների մշակույթը, կյանքը և սովորույթները այդ նկարի ստեղծվելու ժամանակ: Բավարար չէ տեսնել այդ երկար մագաղաթի միայն առաջին մի քանի դրվագները: Նախքան կկարողանաս Չինաստանում կյանքի ամբողջական համապատկերի պարզ նկարը կամ «տեսությունը» ունենալ, պետք է դրա մի ծայրից մինչև մյուս ծայրն անցնես: Նույն կերպ մենք էլ Աստծուն ծառայելիս մեր անձնական նկարն ունենք, մեր «Տեսարանը գետի մոտ Ցինմինի ժամանակ»-ը: Այն սկսում է Եդեմի պարտեզում Ադամի՝ կյանքի ծառի առաջին տեսությունով և ձգվում մինչև կյանքի ծառով Նոր Երուսաղեմը: Նոր Երուսաղեմը այս տեսության վերջին տեսարանն է: Դրանից հետո տեսնելու այլ բան չկա:

....Մենք Աստծուն ծառայում ենք համաձայն վերջին տեսարանի, որը ներառում է նախկին բոլոր տեսարանները....

Քանի որ մենք ունենք արդի և վերջնական տեսությունը, պետք է աննահանջ հետևենք դրան: Մենք բացարձակապես չենք հետևում որևէ մարդու, ընդհակառակը, մենք հետևում ենք տեսությանը: Կոպիտ սխալ է ասելը, թե մենք այս կամ այն մարդուն ենք հետևում: Մենք հետևում ենք մի տեսության, որը պատկանում է ներկա դարաշրջանին: Դա Աստծո ավարտուն տեսությունն է:

Տիրոջ վերականգնումը մեզ է հասել մեր թանկագին Նի եղբոր միջոցով: Այդ պատճառով նա դարձել էր հարձակումների թիրախ: 1934թ.-ին նա ամուսնացավ Հանչ - ժոու քաղաքում: Ոմանք, օգտվելով այդ առիթից, փորձեցին փոքորիկ բարձրացնել: Նա շատ դառնացած էր, ուստի մի օր ես գնացի նրան մխիթարելու և ասացի. «Նի՛ եղբայր, դու գիտես, որ մեր երկուսի միջև ոչ մի բնական հարաբերություն չկա: Պատճառը, որ ես ընդունել եմ քո ընդունած ճանապարհը և ավետարանում եմ, ինչ դու ես ավետարանում, քեզ հետ բնական ընկերությունը չէ: Մենք մեկս մյուսից մեծապես տարբեր մարդիկ ենք: Ես հյուսիսից եմ, դու՝ հարավից: Այսօր ես ընտրում եմ այս նույն ճանապարհը ոչ այն պատճառով, որ հետևում եմ քեզ որպես անձի: Ես հետևում եմ ա՛յն ճանապարհին, որով դու գնում ես: Նի՛ եղբայր, կցանկանայի, որ իմանաս, եթե օրերից մի օր դու հրաժարվես այս ճանապարհից, ես, միևնույն է, ընդունելու եմ ա՛յս ճանապարհը»: Ես սա ասացի, որովհետև ոմանք այս փոքորկի պատճառով որոշել էին թողնել այս ճանապարհը: Այլ կերպ ասած, շատերը մարդուն էին հետևում: Երբ նրանց թվաց, թե այդ մարդը փոխվել է, նրանք երես թեքեցին նրանից: Բայց ես Նի եղբորն ասացի. «Նույնիսկ եթե օրերից մի օր դու հրաժարվես այս ճանապարհից, ես, միևնույն է, ընդունելու եմ ա՛յս ճանապարհը: Դու չես

պատճառը, որ ես ընդունում եմ այս ճանապարհը և քո պատճառով ես չեմ թողնի այս ճանապարհը: Ես տեսել եմ, որ սա Տիրոջ ճանապարհն է: Ես տեսություն եմ ստացել»:

Անցել է հիսուներկու տարի: Այսօր ես բոլորովին չեմ զղջում իմ արածի համար: Անցած հիսուներկու տարիների ընթացքում ես տեսել եմ, թե ինչպես է նորից ու նորից միևնույն պատմությունը կրկնվում: Ոմանք գալիս են ու գնում: Մի տեսարանին փոխարինում է մյուսը: Թայվանում մեր աշխատանքի երեսուն տարիների ընթացքում մենք մի քանի մեծ ճգնաժամերի ենք ականատես եղել: Նույնիսկ այն եղբայրները, որոնց ես էի փրկության բերել և որոնց ես ինքս էի ուսուցանել, թողել են Տիրոջ վերականգնումը: Տեսությունը երբեք չի փոխվել, բայց փոխվել են մարդիկ և նրանք, ովքեր հետևում են տեսությանը նույնպես փոխվել են: Ես կցանկանայի իմ սրտի խորքից ձեզ բոլորիդ սթափ խոսք ասել: Տիրոջ ողորմությամբ ես այսօր կարող եմ կանգնել այստեղ և ցույց տալ ձեզ այս տեսությունը: Հուսով եմ, որ դուք չեք հետևում ինձ որպես անձի. հուսով եմ, որ Տիրոջ ողորմությամբ դուք հետևում եք այն տեսությանը, որ ձեզ ցույց եմ տվել....

Կցանկանայի ձեզ մի փաստ հայտնել: Սա Տիրոջ ողորմությունն էր, որ Նա ինձ համար բացահայտել է այս տեսությունը: Ես ձեզ խորհուրդ եմ տալիս չհետևել ինձ, այլ հետևել այս տեսությանը, որը Նի եղբայրը և դարերի ընթացքում եղած Տիրոջ բոլոր ծառաները թողել են մեզ, որը ես փոխանցել եմ ձեզ: Սա իսկապես այն տեսությունն է, որ ձգվում է Ադամի առաջին տեսարանից մինչև Նոր Երուսաղեմի վերջին տեսարանը: (Էջ 55-59)

© 2022 Living Stream Ministry